ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների բավարարման համար աուդիո և ձայնամեկուսիչ համակարգերի և լուսավորման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/90» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան 02.06.2020թ.
ժ. 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
- նախագահ՝Ա. Բուդաղյան (Գնման Պատասխանատու/Գնահատման Հանձնաժողովի Ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ), ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն,
- անդամներ՝Մ. Սանթուրջյան (Գնման պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ԳՊ/ԲԱ), ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնի առաջատար մասնագետ, Ա. Ապրեսյան, (Գնման պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ԳՊ/ԲԱ), ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժնի վարիչ, Ա. Մշեցյան (Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ԳՊ/ԳԱ) ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի ինժեներ, Զ. Զաքարյան (Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ԳՊ/ԳԱ), ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի ուսուցման նոր տեխնոլոգիաների լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող,
քարտուղար՝ Ա. Մկրտչյան (Գնման պատասխանատու/Ընթացակարգի Համակարգող՝ ԳՊ/ՄՀՄ)

1. «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը չստորագրելու, որակավորման և պայմանագրի ապահովումները «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ չներկայացնելու և պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկվելու վերաբերյալ.

«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/90» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի 2020 թ.-ի մարտի 31-ի որոշմամբ 2-րդ, 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված (հայտարարված) «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին 2020թ.-ի ապրիլի 18-ին էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով (այսուհետ՝ Համակարգ) և blockchaintenders@gmail.com էլեկտրոնային փոստին ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և ուղարկվել է կնքվելիք պայմանագրի նախագիծը (նշված փաստաթղթերը և Համակարգից քաղվածքը կցվում են):

Միաժամանակ 2020թ. ապրիլի 18-ին «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին է ուղարկվել ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին (պայմանագրի շնորհման ծանուցում), սակայն 02.06.2020թ. դրությամբ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի շնորհումը չի ընդունվել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/90» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) ՄԱՍ I-ի 9.5 կետի պահանջների համաձայն «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու առաջարկի մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ստորագրեր պայմանագիրը և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին ներկայացներ որակավորման և պայմանագրի ապահովումները, սակայն նշված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել նշված ապահովումները, գնահատող հանձնաժողովը որոշեց «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիրը ստորագրելու իրավունքից (հիմք՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մաս, Հրավերի ՄԱՍ I-ի 9.5 կետ):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ա) չկայացած հայտարարել «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/90» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգը՝ 2-րդ, 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով.

բ) հաստատել «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/90» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգը 2-րդ, 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝ Ա. Բուդաղյան

Անդամներ (ԳՊ/ԲԱ)՝ Մ. Սանթուրջյան

Ա. Ապրեսյան

Անդամներ (ԳՊ/ԳԱ)՝ Ա. Մշեցյան

Քարտուղար՝ Ա. Մկրտչյան